Ծառայությունների մատուցման պայմանագիր 415/7

ք. Երևան «28» 01 2020թ.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, ի դեմս ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար Դ.Բեգինյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և քաղաքացի Մարտին Միլիտոնյանը (այսուհետ՝ Կատարող, նույնականացման քարտ՝ 002528529, տրված՝ 06.05.2014թ., 003-ի կողմից սոց. քարտ 3807620451) մյուս կողմից (միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը հանձն է առնում իրականացնել կատարողական գործողություններով նախատեսված բեռների /գույքի/ բեռնաբարձման, տեղափոխման, բեռնաթափման, կահույքի և այլ կենցաղային շարժական գույքի ապամոնտաժման և տեղափոխման, շինարարական, ինչպես նաև այլ բնույթի աշխատանքներ:

2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

2.1 Կատարողը պարտավոր է՝

2.1.1 աշխատանքները կատարել անձամբ,

2.1.2 աշխատանքները կատարել Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամկետներին համապատասխան,

2.1.3 իր միջոցներով վերացնել աշխատանքների կատարման ընթացքում իր մեղքով տեղ գտած թերությունները,

2.1.4 Պատվիրատուին անհապաղ տեղեկացնել աշխատանքների կատարումը շարունակելու կամ դրանց աննպատակահարմարության մասին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է

2.2.1 կատարողին անհրաժեշտ պայմաններ ստեղծել աշխատանքի կատարման համար,

2.2.2 ընդունել կատարված աշխատանքները և վճարել դրանց դիմաց,

2.2.3 վճարել Կատարողի կատարած ծախսերը, եթե աշխատանքների կատարման ընթացքում ի հայտ է գալիս աշխատանքները շարունակելու անհնարինություն կամ աննպատակահարմարություն՝ Կատարողի մեղքից անկախ հանգամանքների հետևանքով:

2.3 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3. Օգտագործել աշխատանքների իրավական պահպանության ենթակա արդյունքները

3. Վճարման կարգը և ժամկետները

3.1 Պատվիրատուն Կատարողին վճարումները կատարում է կատարողական ակտը երկկողմանի ստորագրելուց հետո՝ ժամավճարային եղանակով՝ աշխատանքի 1 ժամի դիմաց՝ Երևան քաղաքում 3000 (երեք հազար) ՀՀ դրամի չափով, իսկ ՀՀ մարզերում՝ 3500 (երեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով (առանց հարկային պարտավորությունների և օրենքով սահմանված պարտադիր վճարների):

3.1.1 Սույն պայմանագրի 3.1-րդ կետում նախատեսված վճարվող գումարի մեջ ներառվում են նաև տրանսպորտային ծախսերը, ներառյալ՝ աշխատանքի կատարման վայր հասնելու համար առաջացող, ինպես նաև՝ համապատասխան տրանսպորտային միջոցով գույքի տեղափոխման ծախսերը:

3.2 Հարկային պարտավորությունների և օրենքով սահմանված պարտադիր վճարների հետ կապված հարցերի լուծման պարտականությունը դրվում է Պատվիրատուի վրա, եթե վճարման պահին կողմերն այլ համաձայնության չգան:

4. Պայմանագրի գործողության ժամկետը

4.1 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից կնքման պահից և գործում է մինչև 22.01.2021թ

4.2 Պայմանագրի պայմանների փոփոխումը, լրացումը կամ դրա գործողության դադարեցումը իրականցվում է կողմերի գրավոր համաձայնությամբ:

5. Այլ պայմաններ

5.1 Կողմերի միջև Պայմանագրի պայմանների կատարման ընթացքում ծագած վեճերը առաջնահերթության կարգով լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ դատական կարգով:

5.2 Բոլոր այն պայմանների դեպքում, որոնք նշված չեն Պայմանագրում, Կողմերը ղեկավարվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրության համապատասխան դրույթներով:

5.3 Եթե Պայմանագրի կետերից որևէ մեկը ինչ-որ պատճառով ճանաչվում է ուժը կորցրած կամ անլուծելի, դա չի ազդում մյուս կետերի վրա, և դրանք չեն կորցնում իրենց իրավաբանական ուժը:

6. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ք. Երևան, Հալաբյան 41ա թիվ մեկ գանձապետական բաժանմունք Հ/Հ 900013288023 ՀՎՀՀ 01223338 ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար Դ. Բեգինյան _____	Ա.Ա. Մարտին Միլիտոնյան Հասցե՝ ք. Երևան, Ն. Շենգավիթ 5 փող. 26 տուն Անձնագիր՝ 002528529 Մ. Միլիտոնյան _____

Հարկադիր կատարումն ապահովող
ծառայության տնտեսական բաժնին

Առաջարկ

Ես՝ Մարկոս Մկրտչյան սույնով հայտնում եմ, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից 16. 01. 2020թ. հայտարարված՝ հարուցված կատարողական վարույթներով նախատեսված վտարման կատարողական գործողությունների ընթացքում պարտապանների գույքի բեռնման, բեռնաթափման և բեռնափոխադրման ծառայություններ մատուցելու մրցույթի շրջանակներում կարող եմ մատուցել բեռնման և բեռնաթափման ծառայություններ Երևան քաղաքում 3000 հհ դրամ դրամ 1 ժամվա աշխատանքի դիմաց, ՀՀ մարզերում 3500 հհ դրամ դրամ 1 ժամվա աշխատանքի դիմաց:

20"01"2020թ"

Մարկոս Մկրտչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA ID CARD

ՄԻԼԻՏՈՆՅԱՆ
MILITONYAN

ՄԱՐՏԻՆ
MARTIN

ԿՈՒՋԲԻՇԵՎԻ

Ա/M <<<ARM

28.07.1962 002528529

06.05.2024



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ARMENIA ARMENIA

06.05.2014 003

3807620451

<U3
ARMENIAN

I<ARM0025285291<<<<<<<<<<<<<<<
6207281M2405067ARM<<<<<<<<<<<0
MILITONYAN<<MARTIN<<<<<<<<<<<<<

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

20.01.2020թ. կնքված թիվ 415/7 պայմանագրում փոփոխություն և լրացում կատարելու մասին

ք. Երևան «20» 01 2020թ.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, ի դեմս ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար Դ. Բեգինյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և քաղաքացի Մարտին Միլիտոնյանը (այսուհետ՝ Կատարող, նույնականացման քարտ՝ 002528529, տրված՝ 06.05.2014թ., 003-ի կողմից, սոց. քարտ՝ 3807620451) մյուս կողմից (միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայն 20.01.2020թ. կնքված թիվ 415/7 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.2-րդ կետի՝ Պայմանագրի 6-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) «Պատվիրատու» սունյակում «Հ/Հ 900013288023» հաշվեհամարը փոխարինել «Հ/Հ 900011288025» հաշվեհամարով:

2) «Կատարող» սունյակում «Ա.Ա. Մարտին Միլիտոնյան» բառերից հետո լրացնել հետևյալ հաշվեհամարը՝ «Հ/Հ 1570025480530100 «Ամերիաբանկ» ՓԲԸ»:

2. Համաձայնագիրը համարվում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Պայմանագրի գործողության ավարտը:

4. Համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

ք. Երևան, Հալաբյան 41ա
թիվ մեկ գանձապետական բաժանմունք
Հ/Հ 900011288025
ՀՎՀՀ 01223338
ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար

Դ. Բեգինյան _____

Կատարող

Մարտին Միլիտոնյան
Հ/Հ 1570025480530100
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ք. Երևան, Բ. Շենգավիթ 5 փող., 26 տուն

նույնականացման քարտ՝ 002528529, տրված՝ 06.05.2014թ., 003-ի կողմից

Մ. Միլիտոնյան _____

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ
Դ.ԲԵԳԻՆՅԱՆԻՆ

40-19
16.01.20թ

ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Հարկադիր կատարման օպերատիվ բաժնի կողմից սույն թվականի հունվարի 20-ից նշանակված են բնակարանից հարկադիր վտարումներ, որի ընթացքում անհրաժեշտություն է առաջանում պարտապանների գույքը տեղափոխել:

Ելնելով վերոգրյալից խնդրում եմ Ձեր հանձնարարականն իրավասու անձանց հարկադիր վտարումների ընթացքում առնվազն ութ բանվորներով և մեկ բեռնատար ավտոմեքենայով ապահովելու համար:

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ
ՕՊԵՐԱՏԻՎ ԲԱԺՆԻ ՊԵՏ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ ՀԱՅԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ

16.01.2020թ.

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ
ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՄՈՒՏՔ N Զ-227/...

1